

ՆԱՍՄԻԿ ԹԵԼՄԱՆԻ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՆՆ Ննագիրություն – ազգագրության ամբիոն

ՆԱՅՈՑ ԱՎԱՆԳԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԸՍՏ ՆՈՎՆԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ. Թումանյանի արձակ և չափածո ստեղծագործություններում բազմաթիվ վկայություններ կան հայ ժողովրդի կարևորագույն տնտեսաձևերից մեկի՝ անասնապահության մասին: Ըստ այդ վկայությունների՝ ժողովուրդը կենդանիների առավել հաճախ անվանել է չորստանի. «Ոչ ջեբումը կոպեկ ունի, ոչ դռանը չորստանի, ոչ գլխումը խելք» (Աղքատի պատիվը), «Մի՛ն էլ էմ տեսա՞ք՝ առաջի երկու ոտը վեր դրավ, դառավ չորստանի...» (Արջաորս):

Ընտանի կենդանիների վերաբերմամբ Հ. Թումանյանն օգտագործում է նաև ձեռնասուն, ինչպես նաև տանու անել, ձեռնասուն անել արտահայտությունները՝ ընտելացնել, ընտանի դարձնել իմաստով. «Ձեռնասուն կենդանիների մեջ շունը մարդու ամենահին ընկերն է» (Ծումը):

Ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավորների վերաբերյալ ժողովրդական լեզվում անասուն¹ բառին զուգահեռ գործածվում է ապրանք բառը. «...գութանի ժամանակ ընկեր էր դառնում անասուն ունեցողի հետ» (Աղքատի պատիվը), «Մի ախտ կոտորում է անասունը» (Սովի ժամանակից), «Էսօր էլ դու ապրանքը ջուրը տար» (Խելոքն ու հիմարը), «Տղեք, զգույշ կացեք, ապրանք չտաք ուխտը» (Գելը), «Ապրանքն ական ու անվնաս ետ բերին հանձնեցին սարվորին» (Գրազը), «... էսքան ապրանքս փչացավ» (Տերն ու ծառան):

Ապրանք բառի բուն իմաստը ապրուստի միջոցն է, ունեցվածքը²: Քանի որ հայոց կենցաղում անասնապահությունը կարևոր նշանկություն է ունեցել, ժողովուրդը, հավանաբար ցանկանալով շեշտել այդ հանգամանքը, առանձնապես ապրուստ մատակարարող ընտանի կենդանիներին՝ արջառին, ոչխարին, անվանել է ապրանք:

Բանաստեղծն անդրադառնում է ընտանի և վայրի կենդանիների ժողովրդական անվանումներին՝ բնականաբար օգտագործելով նաև գրական հայերենը: Նախիր³ բառին զուգահեռ որպես հոմանիշ նա գործածում է խոսակցական տավար ձևը. «...հոգնած-ծառավ տավարն ու հոտ» (Գետակը):

Ոչխարի հոտը Լոռվա ու հայերենի մի շարք այլ բարբառներում հայտնի է նաև քոչվոր

¹ Նկատենք, որ «անասուն» բառն օգտագործվում է նաև ձիու վերաբերյալ. «Ինչու՞ էք փանջում անասունին» (Պառավ ձին), «Նոգնած անասուն» (Սովի ժամանակից):

² Մալխասյան Ս., Նայերեն բացառական բառարան, հ. I, Երևան, 1944, էջ 211:

³ Նշենք, որ եղևիկների խումբը նույնպես բանաստեղծն անվանում է նախիր. «Երանի որսկանն ինձ փսր գնդակ փսր, միայն թե դու չխառնվեիր մեր նախիրին,- պարասխանեց եղևիկը» (Եղևիկն ու կրիան-Գրառամներ):

անասնապահ ժողովուրդներից փոխառված պորու կամ սուրու ձևով⁴. «Ընանապահին պորունները անց են կացրել արտերից» (Լոռեցի Սաքոն), խոզերի խումբը՝ բոլուկ⁵, ձիերի, ջորիների, գոմեշների խումբը՝ երամակ անուռով⁶ (Հսկան, Աստղերից իջած կինը):

Ըստ այդմ տարբեր կերպ են անվանվում տարբեր կենդանիներ ունեցող կամ խնամող մարդիկ՝ ուլատեր, գառնատեր, կովատեր, գոմշատեր⁷ (Սասունցի Դավիթը): Սա ակնհայտորեն արտացոլված է Հ. Թումանյանի ստեղծագործություններում, ինչի ցայտուն դրսևորումն է մասնավորապես հովիվ-տավարած զուգադրությունը. «Աշուղ են դարձել հովիվ-տավարած» (Անուշ):

Հ. Թումանյանի ստեղծագործություններում հատկորեն տարանջատված են հովիվը և տավարածը. հովիվը մանր եղջերավոր անասուններից՝ հոտը խնամող անձն է, որին որպես հոմանիշ (գուցե մի փոքր վերապահությամբ) օգտագործվում է նաև գառնարած բառը՝ «գառնարած Մոսի» (Անուշ): Նշենք, որ շատ հաճախ անասունների խնամքն ապահովող անձն արտահայտող բառը ժողովրդական լեզվում կազմվում է կոնկրետ տվյալ անասունի անվան և արածեցնել բայի միջոցով, այն է՝ տվյալ անասունը արածեցնող:

«Սասունցի Դավիթը» ստեղծագործությունում Հ. Թումանյանն օգտագործում է նախապահին հոմանիշ նախորդ բառը, ինչպես նաև մզդուր բառաձևը.

«Նրանց փարախում Աստծու գիշերը

Հավաքվում ձորի ողջ մզդուրները...» (Լոռեցի Սաքոն):

Հեղինակը ծանոթագրությունում այդ բառը բացատրում է որպես անասնապահ՝ հովիվ, խոզարած, տավարած և այլն: Մզդուր, մազդուր կամ մուզդուր բառը գործածական էր նաև Ղարադաղում, որտեղ նշանակել է վարձու անասնապահ⁸:

Լոռիում հավաքած դաշտային ազգագրական նյութերը վկայում են, որ մզդուր անվանել են մսուրային շրջանում ստերշ (սուբահ) խոշոր եղջերավոր անասուններից՝ ձմեռանոցներում (գոմահանդ) խնամող անասնապահներին, ովքեր հիմնականում դեռահաս պատանիներ էին: Նշենք, որ կթի անասունները պահում էին գյուղերում, որպեսզի կանայք կաթնամթերքը մշակեին⁹:

⁴ Ըստ Ն. Աճառյանի՝ «պորու» բառը թյուրքական ծագում ունի և նշանակում է հոտ: Ն. Աճառյան, Թուրքերեն և փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինյան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), հ. Գ, Մ.- Վաղարշապատ, 1902, էջ 321:

⁵ Հաբակնիշական է, որ գայլերի ոհմակին լռեցիները նույնպես բոլուկ են անվանում (Գեղը):

⁶ Ն. Թումանյանի ստեղծագործություններում առկա որոշ բառեր՝ երամակ, խաշնարածություն և այլն բնորոշ են ժողովրդական խոսվածքին: Ավելին, «երամակ» բառն, ըստ Յու. Մկրտումյանի, առավելապես հայերեն է միջին հայերենին. **Ю. И. Мкртумян**, *Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX – начало XX в.): историко-этнографическое исследование.* - Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 6, Երևան, 1974, էջ 23-24:

⁷ Գոմեշի կաշին կիրառվել է որպես պաշտպանական միջոց. «Օխորը գոմեշի կաշի հագավ, որ չպարթի իրեն գոմից»: Գոմեշը համարվել է ամենաուժեղ կենդանին. «Տալը գոմեշի ուժ պակասեց» (Սասունցի Դավիթը):

⁸ Ն. Հովսեփյան, Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, էջ 205:

⁹ Նշենք, որ Ն. Աճառյանի բացատրության մեջ չի շեշտվում անասնապահի վարձու լինելը. Ն. Աճառյան, Հայերեն գաղաղական բառարան, ԷԱԺ, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 809:

⁹ Ն. Թ. Հարությունյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 2000:

Ըստ Յու. Մկրտումյանի՝ հայոց անասնապահական տերմինների համակարգում զգալի տոկոս են կազմում քրդերեն և թուրքերեն (ադրբեջաներեն) բառերը, որը մաքսատրում է հայերի և նշված ժողովուրդների միջև տևական շփումներով ու տնտեսական կապերով, որի վառ արտահայտություններից էր հայկական շատ գյուղերում քուրդ կամ ադրբեջանցի հովիվ վարձելու սովորույթը¹⁰: Հայոց մեջ այս սովորույթի գոյության մասին ուշագրավ նյութ է հաղորդում մաս Հ. Թումանյանը. «Իմ քեռիներից ամենից փոքրը՝ Ահմադը հովիվ էր... Ահմադը թուրք էր...» (Ահմադը):

Հայոց անասնապահական մշակույթում ավանդաբար գերակշիռ նշանակություն է ունեցել խոշոր եղջերավոր անասունը՝ կաթնատնտեսության, մսի արտադրության առումով: Այն կարևորվել է մաս երկրագործական մշակույթում՝ որպես լծկան, և տնտեսության շատ այլ ճյուղերում: Ըստ Հ. Թումանյանի ստեղծագործությունների՝ հայերի տնտեսական կյանքում էական դեր է ունեցել մաս ոչխարաբուծությունը:

Ավանդաբար հյուրերի պատվին ոչխար մորթելու սովորությունը, որ հայոց մեջ ընդունված էր մինչև 20-րդ դարի հիսունական թվականները, նույնպես արտացոլված է Հ. Թումանյանի ստեղծագործություններում (Տերն ու ծառան):

19-20-րդ դարերում հայոց մեջ ձիաբուծությունն ու խոզաբուծությունը տնտեսական կարևորություն չունեին, որը հիմնականում պայմանավորված էր դարեր շարունակ մահմեդական արգելքներով ու ճնշումներով¹¹: Խոզաբուծությունը բավականին զարգացած էր Լոռիում, Տավուշում և Արցախում, որտեղ մահմեդական տարրը խիստ նվազ էր և, շնորհիվ անտառների, հնարավոր էր կերով ապահովել գրեթե ողջ տարվա ընթացքում:

Հ. Թումանյանն իր պատմվածքներից մեկը առաջին տարբերակում անվանել է «Լոռվա խոզարածների կյանքից» (Արջաորս): Դա արդեն փաստում է, որ խոզաբուծությունը կարևոր տեղ է գրավել լոռեցիների անասնապահական մշակույթում: Դա է վկայում մաս հայոց ուտեստի համակարգում խոզի մսի կիրառությունը, ինչի մասին հեղինակը հիշատակում է «Ահմադը» պատմվածքում¹²: 1906 թ. Աշխեն Թումանյանին գրած մամակից տեղեկանում ենք, որ դասեր ծննդյան առթիվ հեղինակը Դսեղից գոմի է ուղարկում Թիֆլիս: Հ. Թումանյանն օգտագործում է *միստը անել, դամը անել, դամատեղ* բառակապակցությունները. «Հիմի մի աշունքվա գիշեր բերել ենք խոզը իր միստը արել...», «խոզը դամն ենք արել» (Արջաորս): Խոսքը խոզերի հանգստատեղի մասին է¹³, իսկ ոչխարի մակադատեղը, ըստ Հ. Թումանյանի ստեղծագործությունների, արխաջ է կոչվում.

«Իրիկները մութն ընկնելիս

Բերում, ուրթումն արխաջ տալիս...» (Ալեք):

«Բայց հովիվը դեռ արթուն է,

¹⁰ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 24:

¹¹ Նույն տեղում:

¹² «Երբ մենք խոզի միս էինք ուրում, միշտ փանեցիք հանաք էին անում, ծաղրում, ծիծաղում էին Ահմադի վրա, թե՛ Ահմադը հայացավ...» (Ահմադը):

¹³ Դան-գեպնափոր՝ վրան ճյուղերով ծածկած փեղ սարերում, որպեղ պալատարում են խոզերը գիշերները: Ս. Մալխասյան, շվ. աշխ., հ. III, Երևան, 1944, էջ 184: Նշենք, որ ըստ Ն. Աճառյանի, «նիսպ փալ» արքանապարտությունը կիրառվում է մաս փավարի վերաբերյալ. «Տաարը նիսպ էր փուել»: Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 813:

Դեռ կանգնած է արխաջում» (Սարերում):

Հ. Թումանյանը բարեխղճորեն բացատրում ու ծանոթագրում է բարբառային այդ արտահայտությունները. արխաջ-ոչխարի գիշերվան մնալու, հանգստանալու տեղն է (Ալեք): Արխաջ-տեղը, ուր վեր են անում (կանգնեցնում են) ոչխարների հոտը: Արխաջ, թուրքերեն բառ է. հոտի բացօթյա հանգստության տեղն է (Սարերում) ¹⁴:

Հ. Թումանյանը հարազատ մնալով իր բարբառին՝ հիմնականում օգտագործում է դրան բնորոշ բառեր, մայր խոզի վերաբերյալ՝ մերում ¹⁵. «Մի հաստիկ (մեկ այլ տարբերակում՝ քյամար) մերում ունեինք» (Արջատրս): Հ. Թումանյանը գործածում է խոզերին վերաբերող «խորթխորթալե անց կենալ» ¹⁶ և «քանդ էին արել» դարձվածքները. «Մի ժամից հետո ամբողջ դաշտը կարծես վարած էր գութանով կամ հազարավոր խոզեր քանդ էին արել» (Արջատրս), ինչպես նաև խոզապարկուկի բառը, որը նա բացատրում է ծանոթագրությամբ՝ միասին, կողք-կողքի ընկնել ¹⁷ (Անուշ):

Հ. Թումանյանի ստեղծագործություններում շատ արժեքավոր ազգագրական նյութեր կան հատկապես սարի կյանքի վերաբերյալ, քանի որ նա այդ նյութի կրողն է, սարի կենցաղի ու դեպքերի անմիջական մասնակիցը, սար-ընտանիքի լիարժեք անդամը:

Ամառային ամիսները Լոռու և մասնավորապես Դսեղի երեխաները, ավանդական սովորույթի համաձայն, անց էին կացնում սարերում: Դա ուներ գործնական երկու նշանակություն՝ ամառվա տապը անցկացնել զով սարերում և օգնել տնտեսությանը անասունների խնամքի հարցերում: Ընդ որում, մեր կարծիքով, երկրորդը ավելի կարևոր էր նաև երեխաների դաստիարակության և կյանքի հետագա դժվարություններին նախապատրաստելու առումով:

Հ. Թումանյանն էլ մանկության լավագույն տարիներին այդ «դպրոցն» է անցել, որի անջնջելի տպավորություններն ուղեկցել են նրան ողջ կյանքում: Վստահորեն կարելի է ասել, որ Թումանյան-անհատականության ձևավորումը շատ կողմերով կապված է հենց սարի կյանքի հետ, ինչի մասին հեղինակը վկայում է ոչ միայն կենսագրական հուշերում, այլև գեղարվեստական ստեղծագործություններում.

«Այն աղմուկի մեջ զվարթ, վայրենի

Ծանոթ է հոգուս ամեն մի հնչյուն:

...Մանուկ հասակիս հնչում ծիծաղի արձագանքն

ահա լսում եմ նորից...

Եվ անքուն հովվի սաստող, ազդարար

Աղաղակները ականջումս են դեռ:

¹⁴ Նշենք, որ ըստ Ն. Աճառյանի և Ս. Մալխասյանի՝ արխաջը կովերին հավաքելու և կթելու տեղն է. Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 152, Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. I, էջ 269:

¹⁵ Ըստ Ն. Աճառյանի՝ մերումը նույնպես Լոռվա և հայերենի մի քանի այլ բարբառներով գոճեմայրն է, ծնունդ ունեցող խոզը, Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 772:

¹⁶ Խորդ խորդ՝ խոզի ձայնն է, ինչ-որ բան առաք-առաք խմելու ժամանակ հանած ձայնը, խորդխորդալը հոմանիշ է խոնջալ բային. Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 485, Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. II, Երևան, 1944, էջ 291:

¹⁷ Այս արքանապարտությունը Ն. Աճառյանը բացատրում է որպես ըմբռնմարտի մի տեսակ.- Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 480:

Իսկ առավոտյան աղմուկը բինի,-
 Հաչոց, բառաչոց, խրխիմք ու գոչում...
 Այն աղմուկի մեջ կիսավայրենի ինձ սիրելի է ամեն մի հնչյուն
 Ես այն սարերումն էի երեխուց...
 Ու թարմ, ցողապատ լեռների լանջում...
 Սուս, ակամջ արա-հովիվն է կանչում» (Անուշ):

«Ես իմ մանկության գարուններն անց եմ կացրել մեր սարերում», - գրում է Հ. Թումանյանը: «Ծատ էի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը՝ Ահմադը, հովիվ էր: Նա ինձ տանում էր, մամ էր ածում գառների մեջ... ու աստղալի, լուսնյակ գիշերները, ահագին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթեռի մման թրթռում, պար էի գալի նրանց շրջանի մեջ» (Ահմադը):

Բանաստեղծը սարի կյանքը մանկան անմիջականությամբ ներկայացնում է որպես անհոգության և երկնագույն երազների աշխարհ.

«Ախ, ինչ լավ եմ սարի վրա
 Անցնում օրերն անուշ, անուշ...
 Ախ ինչ հեշտ եմ սարի վրա
 Սահում ժամերն անուշ, անուշ...» (Ախ, ինչ լավ եմ սարի վրա):

Չնայած լավ գիտեք մասնա սարի կենցաղին բնորոշ դժվարությունները.

«Ուրիշ մի գիշեր-տխուր ու խավար,
 Գողի ու գալի գիշեր ահաբեր...» (Անուշ):

Այսպիսով, սարի կյանքը Հ. Թումանյանի ստեղծագործություններում ներկայացված է իր բոլոր կողմերով՝ մասնա դժվարություններով ու վտանգներով, ինչպես օրինակ ոչխար գողանալու երևույթը, որի կենդանի մկարագրությունը չափածո ձևով Հ. Թումանյանը ներկայացրել է «Սարերում» բանաստեղծության մեջ, իսկ արձակ ձևով՝ «Գրագը» պատմվածքում: Պատահական չէ, որ այս պատմվածքի առաջին տարբերակը Հ. Թումանյանը վերնագրել է «Սարերի կյանքից»: Գա մեկ անգամ ևս վկայում է, որ ոչխար գողանալու (թեև վտանգներով լի) երևույթը սարի կյանքի անքակտելի մասն է՝ իր հետաքրքիր, բազմերանգ և վառ գույներով (օրինակ, երբ հաջողվում է ոչխարն անվնաս ետ բերել)¹⁸:

Բանաստեղծը, հավանաբար, հաշվի առնելով ազգամիջյան հարաբերությունների մուրբ հարցերը, իր ստեղծագործություններում դրանց անդրադարձել է հպանցիկորեն՝ նկարագրելով, թե ինչպես էին մութ, ամպամած ու անձրևոտ գիշերներին թուրքերն ու քրդերը փորձում ոչխար (ապրանք) գողանալ¹⁹. «Սի մթնագիշեր էր. անձրևն էլ անընդհատ

¹⁸ «Լուսադեմին փղերքը վերադարձան: Դեռ հեռվից լսվում էր նրանց ուրախ-ուրախ խոսոցն ու ծիծաղները թանձր մշուշի մեջ: Ապրանքն ական ու անվնաս ետ բերին հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Չալոնի վրան, որ հաց ուրեն» (Գրագը):

¹⁹ «Նրա (թուրք Ղափրչոլլու-Մ.Ն.) մարդիկը այդ սարերի ամենահեշտակավոր գողերն էին: Դալապարանից

տեղում էր միալար: Քնած էր հայերի բիճեն» (Գրազը), «Ալին սարիցն ապրանք քշեց» (Ալեք):

Գողություն անում էին մահ հայերը, որպես վրեժի արտահայտություն.

«Ով գիտի, գուցե հենց էս գիշեր էլ
Իգիթ ոտխներն, անհաշտ ու համառ
Մեկմեկու հոտից ոչխար են քշել,
Մեկ մեկից վրեժ առնելու համար» (Անուշ):

Ըստ Հ. Թումանյանի՝ սարի կյանքն աներևակալելի է առանց հովվի, որն այդ կյանքի առանցքն է: Սարն ու հովիվը անբաժան հասկացություններ են, մա մույնիսկ օգտագործում է բառակապակցություն՝ *սարերի չորան*: Փորձված հովիվները համարվում էին «ուստա չորան»: Նկատենք, որ առավել հաճախ գործածվում է թյուրքական չորան բառը:

Հովվի հիմնական գործառույթը հոտի պահպանությունն ու անվտանգությունն է, երբ բոլորը քնած են, մա հսկում է հոտը²⁰:

Վտանգի դեպքում մա ազդանշան է տալիս սարվորներին ու շներին, մահ՝ գողերին, որ պատրաստ է դիմագրավել նրանց, դիմում է բոլորին՝ օգնության աղերս-բացականչությամբ²¹:

Հայերի մեջ ընդունված էր օտարազգի հովիվ վարձելու սովորույթը: Նույնիսկ օտա-

փախածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավազակային խմբերը նրա հարկի փակ էին ապաստան գտնում» (Գրազը): Գուցե կարելի է ես մի փարբերակ առանձնացնել, երբ հայը թուրքից է գողանում, թուրքը՝ հայից՝ որպես իգիթության, քաջության արտահայտություն. «Նրա մի կողմը թուրք սարվորն է իջնում, իր բիճեն զարկում, մյուս կողմը՝ հայը: Բայց նրանց իգիթները գիշերվա մթնով էլ անցնում են այն խոր անդունդը, իրարից ոչխար են գողանում, ձի, կով կամ գոմեշ են քշում: Նրանց հովիվները հանդերձում են հասնում ու փեղաբերվում են անում» (Գրազը):

²⁰ «Մենակ, անբուն հովիվն ահա
Կանգնած իրեն արխաջում,
Արթուն աչքով հսկում է նա,
Գողից երկյուղ է քաշում» (Սարերում):

«Երբեմն-երբեմն հովիվներն այս կամ այն կողմից խուլ «հեյ-հեյ...» կանչելով խմացնում էին, որ հսկում են դեռ» (Գրազը): Նեղինակի ծանոթագրությամբ՝ «հեյ-հեյ - մի բացականչություն է, որով հովիվը հայտնում է յուր արթնությունը և սպասում է գողերին կամ գազաններին» (Սարերում):

²¹ «Նստեք, հեյ... փարավ, փարավ, հեյ...» (Գեղը), «Մեկ էլ փեսար մի սարի ուսից փարածվեց մի զիլ, առաձգական ձայն-«Նավար հեյ...» Այդ գուժավոր ձայնը ձգվելով՝ փարածվում է լեռներում, ու հանկարծ երկու կողմն էլ բիճերում իրարով են անցնում» (Գրազը):

«Նովիվն «հեյ՛ հեյ՛»...» աղաղակեց,
Շունը թեից վեր կացավ...
Նավարն ընկավ, ողջ զարթոնեցին...
Գիշերը մութն, ակնակիր...» (Սարերում):

«Գիշերվա մի ժամանակը մի թմբկամիտ անցավ վրանների մութից: Շները վեր կացան, վրա փվին, ոչխարը խրքնեց, ձիաները փախան, փավարը ցրվեց: Նովիվները հավար կանչեցին» (Գրազը): Նեղինակի ծանոթագրությամբ՝ հավար՝ օգնության աղերս-բացականչություն է (Սարերում): Նշենք նաև, որ ըստ Ս. Մալխասյանի՝ «հավար» քրդերեն նշանակում է շրապ, փույթ, դա ազդանշան է, որով օգնություն են կանչում, հավար կանչել՝ նշանակում է օգնություն կանչել.- Ս. Մալխասյան, *նշվ. աշխ.*, հ. III, էջ 84:

րազգի հովիվը դառնում էր ընտանիքի սիրելի անդամը, և նրանից բաժանումը ծանր էր²²:

Վարձկան հովվի վարձատրության չափի մասին կարող ենք որոշակի պատկերացում կազմել «Ահմադը» պատմվածքի միջոցով՝ «...մի երկու կով, հորթ, գոմեշ, ձագ, մի կտրկան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, մի երկու շուն էլ ետը գցած, ճանապարհ ընկավ», իսկ պարտավորությունների և իրավունքների մասին՝ Հայաստանի տարբեր պատմագրագրական շրջաններում հայտնի անեկդոտի՝ Հ. Թումանյանի գրանցած տարբերակով՝ լոռեցին արածեցնում է թուրքի ուղտը, որը ձորն է ընկնում, ջախջախվում: Լոռեցին ուղտի տիրոջն ասում է. «Թե հավատում չես, բու (էս) բաշի (զլովիսը), բու կաշի, էտ էլ իստերսան ափար, իստերսան (ուզում ես տար, ուզում ես) բաշխի»:

Հովվին բնորոշ հատկանիշներից էր նաև սրինգ նվագելը, որը դիտվում էր որպես նրա փորձվածությունն ու հմտությունը վկայող արժանիք²³:

«...իրիկունները հանում էր սրինգը ու ածում» (Ահմադը):

«Սուս. ականջ արա-հովիվն է երգում:

Ախ, ձենիդ մատաղ, այ իգիթ չոբան...» (Անուշ):

Ըստ որում, հովվական մեղեդիները կարելի է բաժանել երեք խմբի.

Հոտի վարքագիծը կարգավորող երաժշտություն.

«Զիլ, երկար ու ձիգ, կանչում էր, ծորում,

Բերա էր կանչում իրան գառների...»²⁴ (Անուշ),

Սիրո տխուր եղանակներ (բայաթներ)²⁵.

«Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,

Ու՞մ հետ եմ խոսում...» (Անուշ),

«Եվ մեղամաղձոտ նրանց բայաթին

Գովեստ է տալիս վեհանձն իգիթին,

Կամ հայրենիքի հողին ու քարին,

Սիրավատ կանչում սևաշյա յարին» (Լոռեցի Սաքուն):

«Ծվին փչեց հովիվն ահա-

Աղջիկն ու սերն անուշ, անուշ» (Ախ, ինչ լավ եմ սարի վրա):

Ժամանցի մեղեդիներ.

«Իրիկները մութն ընկնելիս

²² «Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հեպր կպրում էր: ...փափա ու պապս չորս կողմը պարվում էին... Ահմադը չուխի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ, եկավ մութեցավ իմ պապին: Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու աչքերը լցվեցին արքասութով» (Ահմադը):

²³ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 77:

²⁴ «Օրվա փարբեր պահերին «ռիթմի եղանակը» փարբեր էր հնչում, որպեսզի կենդանիներին կողմնորոշելին: Այն առաջին հերթին «սովորեցնում էին» հոգիի այծ-առաջնորդին»: Նույն տեղում:

²⁵ Ն. Թումանյանը բայաթի բառը բացատրում է որպես թուրքերեն կարճ ժողովրդական երգ (Լոռեցի Սաքուն): Նշենք, որ Ս. Մալխասյանն այլ ծագում է վերագրում՝ պարսկերեն, արաբերեն-արևելյան երաժշտության փխուր եղանակ, Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. I, էջ 323:

Բերում, ուրթումն արխաջ տալիս,
Նստում իրանց պարզ վրանում
Ու դովտիցը շհում հանում,
Ածում, կանչում, զվարճանում,
Մինչ հոգնում է, քունը տանում» (Ալեք):

Հանկարծ բայաթին փոխվում է պարի՝ լրացնելով հովիվների ժամանցը.

«Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդեն,
Ծիծաղ ու աղմուկ խառնում են իրար,
Ածում են, խաղում, խնդում միալար» (Լոռեցի Սաքոն):

Կարծիք կա, որ սրինգ նվագելը բնորոշ է եղել միայն հովիվներին²⁶, սակայն, ըստ Հ. Թումանյանի վկայության՝ սրինգ են նվագել նաև խոզարածները. «...բերել ենք խոզը իր միտը արել...մի լուսնյակ գիշեր է: Ես պկու²⁷ եմ ածում, էս Ավագն էլ մի բայաթի է վեր քաշել, որ սար ու ձոր գվգվում են» (Արջատրոս):

Հովիվները (անասնապահները) կողմնորոշվում էին ոչխարների (անասունների) վարքով, և փորձված անասնապահի համար անասունների վարքը յուրօրինակ ազդանշան էր. «...մին էլ տեսնեմ ոչխարը դես ու դեն խախալ-խախալ է անում... ոչխարը կտրկան էլավ ու փախս առավ» (Գելը):

Հովիվի անբաժանելի ատրիբուտներից էր հովվական ցուպը, որն արտացոլված է նաև Հ. Թումանյանի ստեղծագործություններում՝ դազանակ, չոմբախ, կոռ և մահակ ձևերով²⁸: «Իմ հերը մի դազանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքի աստղերը խառնում էր» (Սուտասանը), «...դազանակը պտտեցի, ուսախառը վեր բերի, ա՛ռ հա կտաս...» (Գրազը), «...խոսքն առավ մի հովիվ, որ դազանակին հեմված կանգնած էր»,

«Ծանր չոմբախը գլուխը մեխած,
Օճորքում դրած պիտի մրոտի» (Անուշ);
«Հեմված հովվական երկայն մահակին...» (Լոռեցի Սաքոն),
«Մահակն ուսին, շունն ետևից
Ներս է մտնում մի զըռ չոբան» (Մի կաթիլ մեղրը):

Նշենք, որ հեղինակը դազանակ բառը բացատրում է որպես մահակ, հովվական ցուպ՝ ծանոթագրելով «Անուշի» հետևյալ տողերը.

«Սարոն էլ վերցրեց իրանց շները,
Դազանակն ուսեց, ոչխարը գնաց» (Անուշ):

²⁶ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 77:

²⁷ Պկուն սրնգի մի փեսակ է.- Ն. Աճառյան, Տայերեն գաղաղական բառարան, էջ 919:

²⁸ Այս բառերը, որոնց մի մասն ունի թյուրքական ծագում, հիմնականում նշանակում են կորացրած ծայրով հովվական գավազան, որով հովիվները ոչխար են քշում-բռնում.- Ն. Աճառյան, Տայերեն գաղաղական բառարան, էջ 594, Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. I, էջ 481, հ. IV, Երևան, 1945, էջ 26,470:

Որպես հովվի ատրիբուտ է ներկայացնում նաև սև յափնջին²⁹.

«Ո՞վ է քնած էն տղեն,
Վրեն քաշած սև յափնջին,
Կուռը հանած էն տղեն...» (Անուշ):
«Գլխարկը ծռած, յափնջին ուսին...» (Լոռեցի Սաքոն)

Հ. Թումանյանը հովիվներին, որպես բնության արհավիրքների, զազանների ու ավազակների դիմագրավողների, թերևս առասպելական հատկանիշներ է վերագրում:

«...*Ածրահա* Սաքոն ընչի՞ց է վախում:
Հապա մի նայիր *հսկա* հասակին... (Լոռեցի Սաքոն),
«Ներս է մտնում մի *զըռ* չորան» (Մի կաթիլ մեղրը),
«...զոռաց *ածրահա* հովիվ Չատին» (Գրազը):

Ժողովրդական պատկերացումներում հովվին վերագրվում են մարդկային ամենափայլուն հատկանիշները՝ ազնվություն, հմարամտություն, իզիթություն³⁰, նա առանձնահատուկ տեղ էր գրավում, վայելում շրջապատի հարգանքն ու սերը: Օրինակ, թեև Ահմադը հայ չէր, այնուամենայնիվ, նա վայելում էր Հ. Թումանյանի ընտանիքի անդամների սերն ու հարգանքը: Նույնիսկ օտարազգին այսպես է արտահայտվում հայ հովվի մասին. «Գրանց մեջ Չատի անունով մի չորան կա, իզիթ եմ ասում, որ մենակ էն մի տղի դեմը դուրս գա» (Գրազը):

Ժողովուրդը նույնիսկ երգ է հորինում Սարոյի մասին.

«Եվ գլուղացին երգ հորինեց,
Գովեց հովվին ու յարին...» (Անուշ):

Անկախ բոլոր դժվարություններից, հովվի (անասնապահի) կյանքը Հ. Թումանյանը ներկայացնում է որպես պարզ (Լոռեցի Սաքոն), անհոգ, թումանյանական պատկերացմամբ՝ երջանիկ կյանք. «Այդ աչքերը տավարածի *զվարթ անհոգության* փոխարեն մի վիշտ ունենի» (Գեպի հայրենիք),

«Ինչը կհասնի Սաքոյի կյանքին...» (Լոռեցի Սաքոն),
«Նրանց փարախում Աստծու գիշերը
Հավաքվում ձորի ողջ մզդուրները,
Ծհում ու պկում խառնում են իրար,
Խաղում են, ասում, խնդում միալար» (Լոռեցի Սաքոն):

Հովվի և խոզարածի կացարանները տարբեր անվանումներ ունեն, առաջինի դեպքում՝ փարախ և յաթաղ (Լոռեցի Սաքոն), խոզարածների համար՝ դափ (Արջատրս):

«Թեկուզ և մենակ լինի յաթաղում,
Ածրահա Սաքոն ընչից է վախում» (Լոռեցի Սաքոն):

²⁹ Նշենք, որ յափնջին համարվում է հովվի պարզադիր փարագ, **Յու. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 80:

³⁰ **Յու. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 80:

Նշենք, որ այս դեպքում ևս մկատվում է օտար ազդեցությունը:

Յաթաղը թյուրքական բառ է, որ մշակակում է մակաղատեղ, իսկ փարսիսը ամասնագումի մերսում պարզ կահավորում ունեցող մի հատված էր, որ կովկասյան լեզուներում մշակակում է ոչխարների հանգստանալու պատասպարված տեղ, գոմ³¹:

Դասիլը կիսագետնափոր պարզ կառույց էր: Երկու սյուների վրա մատող փայտամածը ծածկվում էր ճիմերով³²:

Հովիվը և սարվորները հիմնականում սնվում էին կաթնամթերքով: Հետաքրքիր է, որ բանաստեղծը գործածում է ոչ թե *կաթ խմել*, այլ *կաթ ուտել* ժողովրդական արտահայտությունը.

«Գնում է տեսնում» մի հովիվ անհաց կաթն է ուտում» (Ծիտը):

Բանաստեղծը իր գրանցած անեկդոտների շարքին խոսում վերնագիր է տվել՝ «Մեր կյանքից»՝ դրանցում հստակորեն տեսնելով կյանքի արտացոլումը, ինչը լիովին հիմք է տալիս անեկդոտները ևս համարել ազգագրական ինքնատիպ սկզբնաղբյուր:

Ամասնապահական մշակույթում դեռևս վաղմջական ժամանակներից կարևորագույն դեր է ունեցել մարդու ընտելացրած առաջին կենդանիներից մեկը՝ շունը, առանց որի գրեթե անհնար կլիներ ընտանի կենդանիների պահպանությունն ու խնամքը: Հովվի դժվարին գործում շունը դառնում էր մրա օգնականը, «ապրուստը, տեղը ու տունը» (Մի կաթիլ մեղրը), դժվար օրերի ընկերն ու եղբայրը.

«Թեպետև Սաքոն եղբայրներ ունի

Ու մրանց համար արյունը կտա,

Բաց Զորու մման էլ ով կլինի,

Նրան հավասար եղբայր էլ չկա» (Լոռեցի Սաքոն):

Հովիվը շատ հաճախ շան հետ էր կիսում մի կտոր հացը, իսկ երբ շունը պառավում է, «չի կարողանում ուտի, որ ապրի, չեն ուզում սպանեն, ասել են դնում հացի մեջը, տալիս, անձամիլ կուլ է տալիս ու սատկում: Է՛սպես են անում և անբուժելի հիվանդության (քոսի և այլն) դեպքում», - մշում է Հ. Թումանյանը (Ծունը):

Հենվելով Հ. Թումանյանի հաղորդած նյութերի վրա՝ վստահորեն կարելի է ասել, որ լավ շունը ոչ միայն հոտի³³, այլև հովվի (ամասնապահի) անփոխարինելի պահապանն է, ընդհուպ մինչև անձնագրոհություն³⁴: Վտանգի դեպքում հովվի կանչի առաջին արձագան-

³¹ Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. IV, Երևան, էջ 490:

³² Ն. Հարությունյան, ԴԱՆ, 2000:

³³ «Ծնող ոչխար մնա- թե կրթկան մի որևէ քարի փակ մնում է կողքին, պահում, որ գառը դշերը փանեն ոչ, աչքերը հանեն կամ կրթկան- մեջը մնում է, երբ է բերում:

«Ոչխարը որ կրթկան է լինում կորչում, շունն էլ հեպն է գնում: Մոված է մնում, ոռնում ու կողքից չի հեռանում» (Ծունը): Նշենք, որ շան հոտի պահապան դերին անդրադառնում է նաև Յու. Մկրտումյանը.- Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 59:

³⁴ «Նորա փարսիսին հսկում է Զորին,

Ազագիլ Զորին հսկում է անքուն,

Ներքև է բերում նա ձիավորին,

Ղուշն էլ չի անցնում նրանից թաքուն:

Մթնագիշերին հեղեղ է թափում,

քողը շունն է:

Գիշերով բացօթյա մակադատելում հոտին հսկող ամեն մի շուն իր հատուկ տեղն ունի, որը Լոռիում հայտնի է *թև*³⁵ անունով: Հավանաբար այս բառը պետք է ստուգաբանել ոչ թե որպես մակադատելի անկյուններ՝ թևեր, այլ վրացերենից փոխառյալ *թևի* բառով, որը նշանակում է հսկում³⁶:

Հ. Թումանյանի որոշ արտահայտություններ, ինչպես. «Լեռներում ամեն մարդ լավ է հասկանում, թե ինչ կնշանակի «շունը տարան» (Գրագը), բացատրության կարիք ունի: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պահապան կենդանուն ուրիշ տեղ տանելուն, այլ իր տեղից՝ թևից հանելուն ու շեղելուն: Գա փորձված անասնագողերի հնարքներից էր, երբ թալանից առաջ շներից հեռացնում էին բինայից ու մակադատելից: Ըստ մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի՝ նման ամենատարածված հնարքներից մեկը գիշերվա խավարում, մակադատելի վերևից քարեր գլորելն էր, որոնց ետևից շները վազում՝ հեռանում էին, հոտը թողնելով անպաշտպան³⁷:

Գրագը պատմվածքում Հ. Թումանյանը գրում է. «...մի ոչխար էլ առաջն արավ ու շներն անցկացրեց, տարավ ճամփու գցեց»: Խոսքն այն մասին է, որ բինա գնացող կամ ալմտեղից հեռացող օտար մարդկանց շները հսկում էին, և նրանք կարող էին մոտենալ կամ հեռանալ հովվի կամ սարվորների ուղեկցությամբ:

Շունը, ըստ ժողովրդական փորձի ու պատկերացումների՝ կանխազգույն է տան ան-

Նողմը վշտում է, շանթը փայլկպում,
Սաքոյի վրա գազանը գալիս,
Սաքոյի հոփին գող վրա փալիս,
Քնած է Սաքուն, բան չէ իմանում,
Զորին է նրանց դիմացը կանգնում:
Ընկել է Սաքուն թշնամու հետքին,
Կռվում է Սաքուն թշնամու դիմաց,-
Զորին գալիս է յուր հետ-կրկին,
Յուր կողքին դարձյալ Զորին է կանգնած» (Լոռեցի Սաքուն):

«Մին էլ քնած շունը կլանցելով գալիս է: Եկավ, հասավ: «Ալաբաշ, օգնի, ասի, ինձ կերավ...» Նայ՛ քեզ մափաղ, շուն. որ հասավ մեջքին փվավ էլի, ոնց որ մի գնդակ ուլի... որ փակին վեր ընկա, շունն ավելի կարաղեց: Արջն ընկել է ինձ վրա, շունը երևից իրեն ուրում է, որպեղից բռնում է՝ օգուտ չի անում: Դու մի ասիլ վարպետ շուն է, գիտի արջը որպեղից կխեղճանա: Մեջքին վեր էլավ, ականջներիցը բռնեց: Որ ականջներիցը բռնեց, արջը ինձ թողեց: Անրերը գազազեց, շանը թափ փվեց մեջքից, վեր գցեց ու բռնեց, հուպ փվավ թե չանցեց, էլ գիտեմ ոչ ինչ արավ, որ բաց թողեց, շունը կլանցելով ձորն ընկավ, փախավ, կորավ» (Արջաորս):

«Գյառգյառեցու շունը մնացել էր սպանած ու թաղած փրփոջ մոտ» (Շունը):

³⁵ «Որպեղ թևին անում մնում է- մինչև լուս, թեկուզ թևը ջուր լցվի: Եթե մյուս կողմը իրարանցում է պարահում, թաքուն գնում է քնեմում ինչ է- եր գալիս իր թևը պահում» (Շունը): «Քշերները շները ունեն իրենց նստելու տեղը, որը կոչվում է շան թևաբեղ».- Վ. Գ. Ղազարյան, Լոռվա գավառի Դսեղ գյուղի ազգագրական նյութերը (ձեռագիր), 1970 թ., Տնտեսական կենցաղ, 3-րդ մաս, էջ 204: Ն՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:

³⁶ Ն. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 360:

³⁷ Նեց այս երևույթն է նկարագրում հեղինակը «Գրագը» պատմվածքում. «Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում ընկնում են բինեն, ոչխար, ձի, փավար խորանցնում, խառնում են իրար: Շներն ընկնում են նրանց ետևից: Նրանք էլ շներին հաչեցնելով փանում, հեռացնում են բինից: Այնուհետև խառնված, անշուն բինին ետևից վրա են փալիս նրանց ընկերները և շփոթի ու խավարի մեջ քշում են նրանց անասունները»:

դամի մահը՝ կանխագագացումն արտահայտելով անընդհատ ոռնալով, չի մոռանում չար մարդկանց արարքները:

Ծան իմաստնության, կանխագագացման հատկությամբ օժտվածության, հավատարմության մասին ժողովրդական պատկերացումների բազմաթիվ վկայություններ կան Հ. Թումանյանի ստեղծագործություններում և դրանց սևագիր տարբերակներում ու ծանոթագրություններում, ինչն առավել բարձրացնում է հաղորդվող նյութի ճշմարտացիությունը³⁸: Այն հանգամանքը, որ որոշ գրառումներ մա զետեղել է «Մեր կյանքից, փորձից և դիտողություններից» վերնագրի ներքո, մեկ անգամ ևս հաստատում է, որ մրա գործերը հավաստի են, քանի որ վերցված են *ժողովրդի կյանքից, փորձից և դիտողություններից*:

Բավականին հետաքրքիր է շների և տարբեր հաչոցների ժողովրդական բնութագիրը. «Գլուղացու շունը կոպիտ ու անճոռնի, անշնորհք է լինում, հովվի գամփոը (ոչխարի շունը) խելացի ու ժիր է լինում, որսկանի շունը՝ ճարպիկ ու հնարագետ ու սրտով մվիրված իր գործին, անքան, պարապ-սարապ պարոնի շունը՝ ծուլ ու քմապաշտ և գլուղացու անկիրթ շանից էլ ավելի կոպիտ, փակ, անհյուրասեր մարդու շունը՝ տխուր ու մուսլ: Հովվի շունը քիչ է ապրում- գրեթե տան շան կյանքի կեսն է ունենում, որովհետև գիշեր-ցերեկ հսկում է ու տանջվում»³⁹ (Շունը):

«...հաչելը տանու շան հատկությունն է: Որտեղից է առաջ եկել՝ հայտնի չի: Երևի տիրոջն իմացնելու պահանջից, որովհետև հաչելն էլ տեսակ-տեսակ է լինում՝ գողահաչ, թուրքահաչ, աղքատի հաչ, դարիբահաչ, ապրանքահաչ, գիլահաչ» (Շունը): Անշուշտ, այս մասին առավել մանրամասն գրված է մասնագիտական գրքերում, սակայն Հ. Թումանյանի մանատիպ հաղորդումները հենված են ժողովրդական հազարամյա փորձի և դիտողականության վրա, որոնք փոխանցվելով սերնդեսերունդ՝ հասել են մինչև մեր օրերը և այսօր ժողովրդին դրանք հասու են հենց Հ. Թումանյանի ստեղծագործություններից:

Հ. Թումանյանի ստեղծագործություններում հանդիպում ենք շների հետևյալ անուններին՝ Ալաբաշ, Թոբլան, Զորի, Չոլակ: Թարգմանական պատմվածքներից մեկում հանդիպում ենք Կուտիկ անվանը (Համիկի աղոթքը):

Հեղինակը հիշատակություն ունի ման շան կերի մասին՝ «Ո՞վ գիտի՝ պարկում շնա-

³⁸ «Մեր հարևան հովիվը մեռավ: Նա երեք շուն ուներ: Էս երեք շունը իրենց փրոջ մեռելուց մի քանի օր առաջ անդադար ունում էին էնքան ողբալի ու չարագուշակ, որ ահ ու սարսափ էին գցել մեր ամենքի սիրտը:

- Չոռ, չոռ, ձեր գլուխն ուրեք, քանի՞ ունաք,- կանչում էր երիտասարդ հովվի մերն ու փեղով զարկում շներին: Շները կլանցկանցելով էս կողմ, էն կողմ էին փախչում ու մի քանի լուպեից հեկո նորից սկսում ոռնալ: Հովիվը մեռավ թե չէ՝ բոլոր հարևանները բացականցեցին.

- Այ, ընչի համար էին շները ոռնում...

Շունը եթե դունչը վեր է ոռնում- հրդեհ է գուշակում, թե ներքև- մահ մեռնել, թե նստած է ոռնում-իր մահը:

Եթե բարեկամ մարդը խալինանում է(չարանում է-Հ.Տ.), շունը գլխի է ընկնում ու սկսում է վրեն հաչել ու կծել:

Չալակն ուրիշի ու մեր հավերք ջոկում էր:

Մեր Թոբլանը- անդամունը թուրքերը խանցալով խփել էին, էն օրվանից որպեղ թուրք է փեսնում, էլ դժար է լինում ազատելը: Եվ միշտ ջոկում է թուրքը:

Մեր ոչխարը որ ծախեցին, մեր շները լաց էին լինում» (Շունը):

³⁹ Ուշագրավ է, որ ինչպես շար անգամ, այս դեպքում էլ հեղինակը բարեխղճորեն նշում է աղբյուրը. նյութը հաղորդել է իր եղբայր Ռոսպոմը:

լի՞ր չկար...», ծանոթագրությունում բացատրելով, որ դա այն պլյուրն է, որից շների համար լափ են պատրաստել (Լոռեցի Սաքոն):

Հ. Թումանյանի ստեղծագործություններում հանդիպում են անասունների սեռատարիքային կազմը ներկայացնող հետևյալ տերմինները. կով, մոզի, հորթ (նաև եղջերուի ձագը), եզ, գոմեշ, ձագ, ոչխար, գառ, շիշակ,⁴⁰ էծ (այծ), ուլ, ձի (մծույզ), մադիամ, խոզ, մերուն, էշ, քուռակ:

Մասնավորապես, օրինակ՝ ձագ ասելով, ժողովուրդը նկատի ունի գոմեշի ձագը, որձ և էզ ձիու համար ժողովուրդը կիրառում է հատուկ տերմիններ: Տերմինների գերակշռող մասն ունի զուտ հայկական արմատներ, չնայած խոսակցական լեզվում կիրառվում է նաև օտար հոմանիշների հետ զուգահեռ⁴¹:

«Ծիրան անունով մի եզն ունեինք» (Գեղը). կենդանիների մի մասին հատուկ անուններ դնելը, ըստ Յու. Մկրտումյանի բացատրվում է նրանով, որ խոշոր եղջերավոր կենդանիները շատ կարևոր դեր ունեին հայոց տնտեսական կյանքում⁴²: Հ. Թումանյանը Ծիրան անունը բացատրում է այսպես. «Ծիրան և՛ եզան անուն է, և՛ պտղի. այստեղ էլ գուցե մամուռությունն է պատճառը» (Գեղը): Հետևաբար, ժողովուրդը կենդանիներին անուններ է տալիս ըստ գույների, արտաքին նշանների և այլ հատկանիշների: Ծիրան անունը հանդիպում ենք նաև Յու. Մկրտումյանի և Վ. Ղազարյանի նյութերում⁴³, քանզի եզանը տրվող ծիրան անունը բավական լայն տարածում է ունեցել հայոց մեջ և կրել է համահայկական ճանաչում և ընդգրկում: Ըստ մեր հավաքած ԴԱՆ-ի՝ գնված գրաստային կենդանիներին երբեմն տալիս էին նախկին տիրոջ անունը:

Ըստ Հ. Թումանյանի նյութերի՝ մեծ համբավ ուներ կարմիր կովը.

«Կարմիր կովեր բերեն կթան,

Գարնան շինենք եղ ու չորթան» (Սասունցի Դավիթը), որը հայկական հեքիաթներում օժտված է գերբնական հատկանիշներով⁴⁴ և կապույտ ձին. «Կապույտ ձին քեզ փեշքեշ» (Գրազը):

«Էլ կանանչ ախպեր» գողտրիկ բանաստեղծության մեջ գարունը բնութագրող հատկանիշներից մեկն էլ Հ. Թումանյանը համարում է ոչխարի ծինը.

«Էլ կանանչ ախպեր...

Արի, քեզ հետ բեր...

Գառների մայուն...

Ժողովրդական լեզվով տարբեր կերպ են բնորոշվում տարբեր կենդանիներին հա-

⁴⁰ Վերլուծելով Հովնաթանի աշխատությունը՝ Հ. Թումանյանն արքահայրում է իր համոզմունքն այն մասին, որ չնայած «շիշակ կնշանակե ջահել, բայց ավելի շար գործ է անվում ոչխարի ու վավարի համար, և հենց այդ իմաստով է գործածել Հովնաթանը»: Նշենք, որ «շիշակ» բառը պարսկերեն է, հայերենի մի շարք բարբառներում հիմնականում նշանակում է մեկ կամ երկու փարեկան գառ, նաև՝ բարձրահասակ, նուրբ, մաքուր աշ. Հ.Աճառյան, Հայերեն գառնական բառարան, էջ 829, Ս. Մալխասյան, նշվ. աշխ., հ. IV, էջ 517:

⁴¹ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 24:

⁴² Նույն փեղում: Անուն փալիս էին նաև ձիերին՝ Սևուկ, Դռաթ (Պառավ ձին, Մովսի Ժամանակից):

⁴³ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 22, Վ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 215:

⁴⁴ Յու. Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 18:

տուկ ձայները. ոչխարները մնչում են, գառները՝ մայում, բղղում (Գառնիկ ախպեր), խոզը՝ ճղղում, բվվացնում (Արջատրս), մրթմրթում, խորթխորթում (Մեր կյանքից), ձին խրխնջում է, շունը՝ կլանչում, կլանչկլանչում (Արջատրս): Ժողովուրդը տարբեր անուններով է կոչում մաս տարբեր կենդանիների գարշապարը, օրինակ՝ կովի կնդակ, ձիու սմբակ (Գառնիկ ախպեր): Հ. Թումանյանը գառների որոճալը ներկայացնում է նույնպես լոռեցիներից հարազատ բարբառով՝ արոճ անել: Հեղինակը կիրառում է անասնապահական մշակութային բնորոշ ևս մի քանի արտահայտություններ, օրինակ՝ *օրգել (օրիգել)*,⁴⁵ *կեստ անել*, որ Լոռվա և հայերենի մի քանի բարբառներով նշանակում է հորթերի հանկարծ փախչելը: Հեղինակի վկայությամբ՝ փուսի Լոռվա բարբառով նշանակում է «երեխայի կերակուր, ավելի կաթ, մածուն, սակայն կիրառվում է նաև կթի անասուն նշանակությամբ»:

«Լուսաբացին» բանաստեղծության միջոցով տեղեկանում ենք, որ նախիրը հանդ են տանում մինչև լուսաբաց, քանզի ժողովրդական գիտելիքների համաձայն՝ լուսաբացն ազդարարվում է աքլորի երրորդ կանչից հետո, մինչդեռ նախիրը հանդ են տանում երկրորդ կանչից հետո.

«Ծուղրուղու.

Խոսեց ծեզին երկրորդ բերան.

-Հո-հո, հո-հո,

Նախիրն արդեն հանդը տարան:

-Ծուղրուղու.

Լույսը բացվեց երրորդ կանչին...»

Ոչխարն արոտ տանելու ժամանակի մասին հեղինակն ուղղակի վկայություն ունի.

«Նոր է լուսաստղն երեսը հանում,

Որ Սաքոն ոչխարն արոտ է տանում» (Լոռեցի Սաքոն):

«Անուշ»-ի «Ոչխարդ բեր կիթ, օրը մաշ դառավ» տողը հստակորեն ցույց է տալիս, որ կեսօրին ոչխարը կթում էին:

Ոչխարը կթում էին հատուկ հարմարեցված վայրում, որը կոչվում էր բերատեղ (բեր)⁴⁶: Հ. Թումանյանի գրվածքներում հանդիպում է երկու արտահայտություն՝ «բերին» (այսինքն՝ կթելու ժամին, կթելու ժամանակ) և «բերա կանչել» (այսինքն՝ ոչխարին բերել կթելու տեղը՝ (բերատեղ)).

«Երբոր մա «բերին»,

Զիլ, երկար ու ձիգ, կանչում էր, ծորում,

Բերա էր կանչում իրան գառներից» (Անուշ):

⁴⁵ Հեղինակը կիրառում է «օրիգալ էջ» արքայապաշտություն (Կախարդի քսակը), թեև ըստ Մ.Աճառյանի՝ «օրգել» վերաբերում է ձիուն. «ձին կապել և թողուլ արածելու համար». Մ. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 1138:

⁴⁶ Ըստ Մ. Աճառյանի՝ «բեր» նշանակում է և՛ ոգխարները կթելու գործողությունը, և՛ կթելու ժամանակը, և՛ կթելու մակադարերը՝ բերաբերը. Մ. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 182:

Հեռագնա անասնապահությանը բնորոշ ամատային բնակավայրը Լոռու բարբառում հայտնի է բինա ձևով⁴⁷:

«Իսկ առավոտյան աղմուկը բինի...
Թնդում է զվարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից...» (Անուշ):

«Սարերում» բանաստեղծության ծանոթագրության մեջ հեղինակը բինա բառը բացատրում է որպես սարվորների վրանների խումբ: Սրանից հետևում է, որ անասունների ամատային խնամքը, ամռանը անասնապահական կյանքը կազմակերպելու նպատակով սար (Լոռվա բարբառով՝ ուրթ, յայլաղ) տեղափոխված բնակչությունը հայտնի է *սարվոր* անունով:

Երբ խոսքը քոչվոր անասնապահական տնտեսաձև վարող ժողովուրդների մասին է, գործածվում են քոչ, օբա բառերը.

«Այս իրիկուն մորա ափին
Թուրքի քոչ է վայր եկել...»
«Մուսաբեկի դաժան օբեն
Դարձյալ իջավ յուր ուրթում» (Լոռեցի Սաքոն):

Ըստ ԴԱՆ-ի՝ սարերում կառուցում էին մշտական և ժամանակավոր կացարաններ: Ժամանակավոր կացարանների ամենատարածված տեսակը Լոռիում թաղիքածածկ դազե կամ դազա կոչվող կացարանն էր, որը Հ. Թումանյանը «Անուշի» տարբերակներից մեկի ծանոթագրությունում բացատրում է որպես վրան (Անուշ)⁴⁸:

Թեև անասնապահական մշակույթի որոշ բնագավառների, օրինակ՝ կաթնատնտեսության վերաբերյալ Հ. Թումանյանի ստեղծագործություններում հանդիպում ենք ընդամենը թոռուցիկ հիշատակությունների կամ առանձին բառերի՝ կովկիթ, խնոցի, եղ ու չորթան, մորթալ, դալմաղ (սերուցք), սեր (թթվասեր), ալմուամենայնիվ, հեղինակի գրական ժառանգությունը իրավամբ արժեքավոր ազգագրական աղբյուր է ման հայոց անասնապահական մշակույթի ուսումնասիրության համար:

Այն հանգամանքը, որ «Լոռեցի Սաքոն» պոեմի նախնական տարբերակներում մեծ տեղ հատկացված հովվական կյանքի մանրամասներից հեղինակը հրաժարվել է հետագա մի քանի հրատարակություններում՝ իր տեսանկյունից ստեղծագործության գեղարվեստական շահերից ելնելով, բայց հետագայում, կարծես ափսոսալով, մորից վերականգնել է նախկին տարբերակը, մեր կարծիքով վկայում է այն մասին, որ Հ. Թումանյանի մեջ հավասարապես խոսել են բանաստեղծն ու ազգագրագետը: Երբեք չիջնելով պարզ գյուղագրության մակարդակին՝ մեծ բանաստեղծը հնարավորինս «փրկել է» ման ազգագրական նյութը:

⁴⁷ Ըստ Մ. Մալխասյանի՝ «յայլաղներում որոշ փեղ, որ մի գյուղ կամ փոքր վրաններ է խփում և փավար արածեցնում»։ Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. I, էջ 370:

⁴⁸ Մ. Մալխասյանի բացատրությամբ՝ արևելյան, թյուրքական ծագում ունեցող «դազա» բառը նշանակում է թաղիքն հյուղ, «որ շինում են ամառը սար գնացողները»։ Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. I, էջ 481: